ի նկատի ունենալով որ ձեռնադրուողներից շատերը պարտադանց են դանուում հովուել այն ժողովուրդը, որոյ վերայ ձեռնադրուած են, հրամայեց՝ նախ յիշեալ տիրացուին իւր ընտանեօք փոխադրել Ճալէթից Ջլման գիւղը ի հաստատ բնակութիւն և ապա առաջարկել ի ձեռնադրել քահանայ։

—

3 հոկտեմբ. Սինոդը ի նկատի ունենալով Երևանայ Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնը 15 սեպտ. թ. 2448 թոյլատրեց վերանորոգել Էջմիածնի գիւղի եկեղեցին, ծախսելով եկեղեցական գրամից 400 բուբլի, իսկ պակասորդը հոգալ ժողովրդոց արօք։

—

11 նոյեմբ. Սինոդը Աղգիս Վեհափառ Հայրապետի Կոնդակի հիման վերայ 19 հոկտ. թ. 1810, կարգեց վանահայր Երնջակու Ս. Կարապետ վանքի, Մայր Աթոռի միաբան Աբժ. Եղիշէ վարդապետ Ամատունին, իսկ նախկին վանահայր Ստեփաննոս վարդապետ Իսկանդարեանցին ըստ հաճութեան Նորին Օծութեան, ուղարկեց միաբան Ս. Գեղարդայ վանք։

ՔԱՂՈՒԱԾՔ.

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿՈԼԷԳԻՍԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԱՒԷՏԻՔԵԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ

ՆՈՏԱՐՈՎ, ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԿՏԱԿԻՑ։

Գ. կէտ. — «21,000 բուբլին, որ ես պահպանութեան և իւր տոկոսներով աւելանալու համար 10 տարի ժամանակով դրել եմ Ռոստովի (Դոնի վրայ) արքունի բանկի գրասենեակը, որի համար իմ անունովս ունիմ տոմսեր մէկը 1886 թուի սեպտեմբերի 3 ից № 106,667 ով (.5,000 բուբլու) և միւսը 1887 թուի մարտի 4-ից № 106,677 ով (մնացեալ 6000 բուբլուն), և 3000 բուբլի թղթադրամը կտակում եմ Էջմիածնի Հոգևոր ճեմարանին այն պայմանով, որ այդ ճեմարանում իմ անունով երեք որդեգիր պահուի....։

Դ. կէտ. — «5000 բուբլին, որ և պահպանութեան և տոկոսներով աւելանալու համար 10 տարի ժամանակով դրեմ եմ Ռոստովի (Դոնի վրայ) արքունի բանկի գրասենեակը, որի համար ունիմ մի տոմս 1887 թուի մարտի 3-ից № 106, 676-ով, կտակում եմ նոյնպէս Էջմիածնի Հոգևոր ճեմարանին այն պայմանով, որ նրա տոկոսով հայերէն դասագրքեր տպուին և Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանի կարգադրութեամբ բաժանուին Հայաստան Հայոց ամենաղքատ երեխաներին գրքերի վրայ հետևեալ մակագրով. «տպագրուած է բժ. Գէորգ Աւետիքեան Տիգրանեանի հաշուով ամենաղքատ հայ մանուկներին ձրիապէս բաժանելու համար»։ Այդ գումարը յատկացնում եմ հայերէն լեզուով գրքեր հրատարակելու համար։ Հայոց Հոգևոր ճեմարանը կտակիս այս կէտի հաշիւը տարէց տարի պէտք է հրատարակէ Հայոց լրագրում»։

Ե. կէտ. — «Ռոստովի (Դոնի վրայ) արքունի բանկի գրասենեակի վերոյիշեալ՝ 1886 թուի սեպտեմբերի 3-ից № 106,667-ով, 1887 թուի մարտի 4-ից № 106, 667-ով և նոյն թուականի մարտի 3-ից № 106, 676-ով, նոյնպէս և սոյն կտակի Գ. կէտում նշանակուած է երեք հազար բուբլով եկեղեցական հոգաբարձութիւնը տոկոսաբեր թղթեր ձեռք բերելով պէտք է յանձնէ Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանին՝ պահպանութեան և տոկոսներն ստանալու համար»։

Զ. կէտ. — «Եթէ Նախիջևան քաղաքի (Դոնի վրայ) Աղքատաց խնամատար Հոգաբարձութիւնը կարևոր և շահաբեր կը համարէ իմ անուան թոշակաւորների համար, իմ՝ Ռոստովի (Դոնի վրայ) արքունի բանկի գրասենեակը դրած 26,000 բուբլով հետևեալ

տոմսերով 1886 թ. սեպտեմբեր. 3-ից № 106, 668, 1887 թ. մարտի 3-ից և 4-ից №№ 106, 676, և 106, 677, տասը տարուան պայմանաժամն անցնելուց յետոյ, ինչպէս որ յիշուած է այդ տոմսերում, իրաւունք ունի ձեռք բերելու այլ տոկոսաբեր թղթեր, որ ապահովուած են կառավարութեան կողմից (եթէ հարկաւոր է, նոյն իսկ անուանական, իմ անունով), և միշտ տոկոս են բերում, որոնցով կարող լինին անընդհատ ոչ պակաս քան երեք թոշակաւոր ուսանել Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանում ամենաչքաւոր Հայերի զաւակներից և գրքեր տպագրուել Հայերէն լեզուով, համաձայն սոյն կտակի Գ. և Դ. կէտերին»։

Է. Նէպ. — «Արևելեան երրորդ փոխառութեան երկու դրամատոմս (օբլիգացիա), իւրաքանչիւրը հազար բուբլիանոց, կտակում եմ որպէս պարգև այն անձին, որ կը կազմէ և կը տպագրէ Հայերէն լեզուով Հայկական բառերի արմատների մի բառգիրք»։

Ը. Նէպ. — «Արևելեան երրորդ փոխառութեան երկու դրամատոմս, իւրաքանչիւրը հազար բուբլիանոց, կտակում եմ որպէս պարգև այն անձին, որ կը կազմէ և կը տպագրէ Հայերէն լեզուով Հայկական հոմանիշ բառերի մի բառգիրք»։

Թ. Նէպ. — «Արևելեան երրորդ փոխառութեան հազար բուբլիանոց սոյն կտակի եօթներորդ կէտում նշանակուած երկու տոմսերի և արևելեան երրորդ փոխառութեան հազար բուբլիանոց ութներորդ կէտում նշանակուած երկու տոմսերի տոկոսները մինչի բառգրքերի տպագրութիւնը պիտի յաւելացուին այն գումարի տոկոսներին, որ կտակիս չորրորդ կէտի համաձայն նշանակել եմ Հայերէն լեզուով դասագրքեր տպագրելու համար։ Արևելեան երրորդ փոխառութեան հազար բուբլիանոց չորս դրամատոմսերը, որ նշանակուած են բառգրքեր կազմելու համար, իմ մահից յետոյ պիտի յանձնուին Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանին ըստ պատկանելոյն գործադրելու համար։ Այդ պարգևները տալը որոշելն յանձնում եմ Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանին այն պայմանով, որ նա պարգևի համար առաջարկած երկասիրութեանց մասին հարցնէ Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանի և Մոսկուայի Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց Լիցէոնի Հայկաբանութեան պրոֆեսորների, այլ և այդ բանի համար անհրաժեշտ հմտութիւն ունեցող այլ անձանց կարծիքները, իսկ մրցանակ տալը վճռելուց յետոյ տպագրէ իւր արձանագրութիւնն այդ մասին բոլոր ստացուած կարծիքների հետ միասին»։ Բժ. Գ. Տիգրանեանի սոյն կտակը հաստատուած է 1894 թ. փետրուարի 17-ին Տագանրոգի նահանգական դատարանում և կտակատար նշանակուած է նոր Նախիջևանի Աղքատաց խնամատար Հոգաբարձութիւնը։

—

ԾԱՆՈՒՅՑՈՒՄՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԻՑ։

1. Եկեղեցական — ծխական դպրոցների ուսուցիչներից ոմանք խնդրում են յետ դարձնել իւրեանց ուսման և այլ վկայագրերը։

Այս առթիւ Դիւանս ծանուցանում է, որ առ հասարակ բոլոր ուսուցչաց վկայագրերը շուտով կուղարկուին Սրբազան Առաջնորդներին իւրեանց տէրերին յանձնելու համար։

2. Դիւանս ծանուցանում է, որ եկեղեցական — ծխական ուսումնարանների վերաբերեալ ամենայն գրութիւն և առաջարկութիւն պէտք է մատուցուին յանուն Նորին Վեհափառութեան, միմիայն Սրբազան Առաջնորդների միջոցաւ։

—

Ուսուցչաց ընդհանուր ցուցակի մէջ մուծուած են հետևեալ անձինք.

1. Աբրահամ Ազատեան . . . . . Ե. կարգ
2. Իոաննան Տէր Յովհաննիսեան . Դ. »
3. Թագուհի Արարատեան . . . . Ժ. »
4. Նատալիա Նազարեան . . . . ԺԱ. »